



ՎԱՐՂԱՎԱՌ

Վարդավառը հայոց կենդանութեան, ծաղկումի եւ գեղեցկութեան տօնն է: Ան մեր հին հաւատքին՝ հեթանոսութեան աստուածներէն Աստղիկ եւ Անահիտ դիցուհիներուն նուիրուած տօնն է: Աստղիկը ջուրի եւ գեղեցկութեան աստուածուհին էր: Ա ն ա ն ձ ը ռ է լ կը պարգեւեր ծարաւ արտերուն, իսկ Անահիտ՝ Մայր աստուածուհին էր, Ան բերք ու ծնունդ կը պարգեւեր մարդոց:




Վարդավառ կը նշանակէ վարդերով զարդարուելու օր, իսկ վառ բառը փայլուն եւ զարդարուն իմաստներով գործածուած է, որովհետեւ այդ օրերուն Աստղիկ եւ Անահիտ աստուածուհիներուն արձանները վարդերով կը զարդարէին:

Վարդավառը կապուած է նաեւ ջրհեղեղի յիշատակին: Ահա թէ ինչո՞ւ այդ օրը մարդիկ իրար վրայ ջուր կը սրսկեն կամ աղանի կը թռցնեն՝ ի յիշատակ Նոյեան աղանիին:

Քրիստոնէութիւնը պետական կրօնք դառնալէ ետք, Ս. Գրիգոր Լուսաւորիչ ուզեց ամեն ինչ որ հեթանոսական հաւատքի հետ կապ ունի քրիստոնէականացնել՝ ժողովուրդը ամբօրէն կապելու աստուածային կրօնքին, սակայն զգուշացաւ զայն բոլորովին կտրել իր պապեանական աւանդութիւններէն եւ սովորութիւններէն:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ամեն տարի կը տօնէ Քրիստոսի Այլակերպութիւնը կամ Պայծառակերպութիւնը, որ եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն մէկն է:

ԹԻՒԵ ՊԱՏՐԱՍՏԵՆՆԵՐ՝ ՄԱՐԿՈՒՆԻ ԱՇԽԵՆԻՆ, ՇԱՀՐԱՆԻՆ, ՆԿԱՐԱՍԱՐՈՒՆՆԵՐ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՇԻՇԵՆՆԵՐ




Գտի՛ր պահուըտած իրերը եւ գունաւորէ՛ զանոնք:

ՀԱՆՏԵԼՈՒԿ:

Կը ծնի ու կը մեծնայ, նոյն օրն ալ կը մահանայ:
Յետոյ նորէն կեանք կ'առնէ, պայծառ շորեր
կը հագուի:

Ներսէս Շնորհալի

Դժճի : Ղուկոստուկ



Իւրաքանչիւր զգացում արտայայտող նկար կտրէ՛ եւ փակցո՛ւր համապատասխան դէմքին:

ՏՂԱՆ ԵՒ ՕՁԸ

Շատոնց, շա՛տ շատոնց, Չինաստանի հիւսիսային կողմերը կ'ապրեր տղայ մը, որ ամէն օր դպրոց կ'երթար եւ ճամբան անդադար կ'երազեր շուտ մեծնալ ու հերոս դառնալ:

Եւ ահա անգամ մըն ալ ան շատ փոքր օձ մը կը տեսնէ: Երբ կ'ուզէ անոր մօտեն անցնիլ կը լսէ Ֆշշոցը, որ կ'ըսեր.

-Տղա՛, ո՛վ աղա՛, վերցո՛ւր գիս, անօթի եմ:

Տղան կը խղճայ օձին, կը վերցնէ գայն ու իր դպրոցը կը տանի: Հոն օձին համար յատուկ բոյն մը կը պատրաստէ եւ ամէն օր ջուր եւ կերակուր կ'ապահովէ անոր:

Օձը կը սկսի շատ արագ մեծնալ եւ բոյնը մարմինը կը նեղէ: Ատիկա ալ պատճառ կը դառնայ, որ ուսուցիչներէն մէկը նկատէ զինք եւ սաստիկ բարկանայ տղուն վրայ ըսելով.

-Այդ ի՞նչ է: Շուտ փախցո՛ւր գիսք, ամայի տեղ մը տա՛ր, արդեօ՞ք չես գիտեր թէ օձը ի՞նչ է:

Տղան չէր ուզեր օձէն բաժնուիլ, միեւնոյն ատեն չէր ուզեր ուսուցիչին հրամանը մերժել, հետեւաբար կը տանի ու հեռու լեռնային տեղ մը կը ձգէ գայն, ինքն ալ տխուր դպրոց կը վերադառնայ:

Ազատութեան մէջ օձը կը սկսի աւելի արագ մեծնալ ու աճիլ եւ շուտով ինքնիրեն համար յատուկ տեղ մը կը շինէ լեռներուն մէջ:

Շուտով քաղաքին մէջ լուրը կը տարածուի, որ լեռներուն մէջ վտանգաւոր եւ վայրի օձ մը կ'ապրի եւ ճամբայէն անցնող որեւէ մարդու կը վնասէ ու կուլ կու տայ գայն: Լուրը կը հասնի նաեւ ուսուցիչին.

-Կը տեսնե՞ս ինչ ըրիր,- կը սկսի յանդիմանել տղուն,- քու պատճառովդ որքա՛ն մարդիկ կը տառապին:

-Ե՛ս սնանեցի այդ հրէշը, զինք սպանողն ալ ե՛ս պիտի ըլլամ:

Տղան իր ամբողջ մարմինին շուրջ սուր դանակներ կը կապէ, ձեռքն ալ մեծ սուր մը առնելով ճամբայ կ'ելլէ վայրենի օձը գտնելու:

Երբ կը հասնի վայրը, ամբողջ ուժով կը գոռայ.

-Հէ՛յ, ապերա՛խտ օձ, ես քեզ սնանեցի ու մեծցուցի, հիմա բարութեանս փոխարէն այսպե՛ս կը հատուցես զիս:

Օձը ծիծաղելով կը մօտենայ տղուն եւ կ'ըսէ.

-Ո՛վ միամի՛տ մարդ դուն չէի՞ր գիտեր, որ մարդուն ամէնէն սարսափելի թշնամին իր կուրծքին վրայ մեծցած օձն է...

-Առաջ չէի գիտեր, բայց այժմ գիտեմ: Շո՛ւտ դուրս ելի՛ր պահուըտած տեղէդ, որ կռուինք:

Օձը բանալով իր արիւնոտ բերանը, տղուն կուլ կու տայ եւ ան կ'իյնայ տաք խաւարի մը մէջ: Սակայն կը սկսի արագօրէն շրջիլ օձին մարմինին մէջ եւ իր շուրջ կապուած դանակներով աջ ու ձախ կը խոցէ անոր մարմինը: Վերջաւորութեան՝ ձեռքը գտնուող սուրով օձին մարմինը կը պատռէ եւ հեւասպառ դուրս կու գայ անկէ: Օձը արդէն ոչնչացած գետին կը փռուի:

Այսպիսով՝ տղան կը սրբագրէ իր սխալը:



ԻՆՉԵՐԷ՞ ԿԸ ԲԱՂԿԱՆԱՅ ՄԱՐԴՈՒՆ ՄԱՐՄԻՆԸ

Մարդուն մարմինը կը բաղկանայ տարբեր մասերէ, որոնք զանազան պաշտօններ կը կատարեն:

Մարմինը ունի *ստամոքս*, որ կ'օգնէ ուտելու, խմելու եւ մարսելու, *մկաններ*՝ մարմինը ուղիղ պահելու:

Ունի *սիրտ* մը, որ արին կը մղէ դէպի ուղեղ եւ անկէ մարմնին մնացեալ մասերը, իսկ *արիւնին* պաշտօնն է՝ շրջագայելով սնունդ եւ օդ հասցնել մարմնի իւրաքանչիւր մասին:

Մաշկը ամբողջ մարմինը կը ծածկէ եւ միատեղ անոր տարբեր մասերը կը պահպանէ:

Ու այս բոլորին պատասխանատուն՝ ՈՒՂԵՂն է, որ շատ զգուշութեամբ պաշտպանուած է գլխուն մէջ: Ան կը նմանի յատուկ դէկավարութեան կեդրոնի, որ մտածելու կողքին, կ'օգնէ նաեւ տեսնելու, խօսելու, լսելու, քնանալու, մեծնալու... եւ շա՛տ ուրիշ գործերու:

